ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 9/19

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ԵՎ ԱՅԼ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԱԽՆԱԿԱՆ ՔՆՆԱՐԿՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՍՏԵՂԾՎԱԾ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ, ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՄՇՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Բյուրեղավան 18 նոյեմբերի 2019թ.

2019 թվականի նոյեմբերի 18-ին, ժամը 16:00-ին Բյուրեղավան համայնքի Բյուրեղավան բնակավայրում՝ Բյուրեղավանի համայնքապետարանի թիվ 1 վարչական շենքում, տեղի ունեցավ համայնքի ավագանու որոշումների նախագծերի և այլ առաջարկությունների նախնական քննարկման նպատակով ստեղծված ֆինանսական, բյուջետային և տնտեսական հարցերի մշտական գործող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) նիստ՝ «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքում տեղական տուրքերի 2020 թվականի տեսակներն ու դրույքաչափերը սահմանելու մասին», «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքում տեղական վճարների 2020 թվականի տեսակները, դրույքաչափերը և արտոնությունները սահմանելու մասին», «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի կողմից մատուցվող ծառայությունների դիմաց գանձվող վճարների 2020 թվականի դրույքաչափերը սահմանելու մասին», «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի վարչական տարածքում աղբահանության վճարի 2020 թվականի դրույքաչափերը և արտոնությունները սահմանելու մասին», «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի ավագանու 2018 թվականի դեկտեմբերի 27–Ի N 71-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու և պահուստային ֆոնդից գումար հատկացնելու մասին» որոշումների նախագծերի թեմաներով:

Նիստին մասնակցում էին Հանձնաժողովի նախագահ Արման Օհանյանը, անդամներ Արման Խանզադյանը, Արտյոմ Ավագյանը, համայնքապետարանի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման, ծրագրերի կազմման և համակարգման բաժնի պետ Լիդիա Պողոսյանը, գլխավոր մասնագետ Վոլոդյա Հայրապետյանը, Հանձնաժողովի աշխատանքներին աջակցող համայնքապետարանի աշխատակազմի առաջին կարգի մասնագետ Զարուհի Ապրեսյանը:

Հանձնաժողովի նախագահը ներկայացրեց նիստի օրակարգը՝

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքում տեղական տուրքերի 2020 թվականի տեսակներն ու դրույքաչափերը սահմանելու մասին,
2. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքում տեղական վճարների 2020 թվականի տեսակները, դրույքաչափերը և արտոնությունները սահմանելու մասին,

3. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի կողմից մատուցվող ծառայությունների դիմաց գանձվող վճարների 2020 թվականի դրույքաչափերը սահմանելու մասին,
4. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի վարչական տարածքում աղբահանության վճարի 2020 թվականի դրույքաչափերը և արտոնությունները սահմանելու մասին,
5. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի ավագանու 2018 թվականի դեկտեմբերի 27-Ի N 71-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու և պահուստային ֆոնդից գումար հատկացնելու մասին

համայքնի ավագանու որոշումների նախագծերի քննարկում:

Օրակարգի 1-ին հարցի շուրջ Լ.Պողոսյանը ներկայացրեց, որ «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 86-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի «բ» ենթակետին համապատասխան՝ համայնքի բյուջեի ձևավորման աղբյուր են հանդիսանում նաև տեղական տուրքերը: Նույն օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ կետին և «Տեղական տուրքերի և վճարների մասին» օրենքի 8-րդ, 9-րդ, 11-րդ և 12-րդ հոդվածներին համապատասխան՝ տեղական տուրքերը համայնքի ղեկավարի ներկայացմամբ սահմանում է համայնքի ավագանին՝ համայնքի տարեկան բյուջեն հաստատելուց առաջ: Հիմք ընդունելով վերը շարադրվածը, ինչպես նաև, կիրառելով «Տեղական տուրքերի և վճարների մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 4-րդ մասով ամրագրված՝ ըստ համայնքների տեսակների (սահմանամերձ, լեռնային, բարձրլեռնային, գյուղական կամ քաղաքային բնակավայրեր ներառող)՝ օրենքով կարող են սահմանվել տեղական տուրքերի դրույքաչափերի տարբեր գործակիցներ սկզբունքը, որոշման նախագծով սահմանվել են Բյուրեղավան համայնքում տեղական տուրքերի 2020 թվականի դրույքաչափերը:

Սույն հոդվածով սահմանված դրույքաչափերը գյուղական բնակավայրերում համայնքի ավագանու որոշմամբ կարող են հաշվարկվել 0.3, 0.5 կամ 0.75 գործակիցների կիրառմամբ, քաղաքային բնակավայրերում՝ 0.5 կամ 0.75 գործակիցների կիրառմամբ:

Որոշվեց՝

հավանություն տալ Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքում տեղական տուրքերի 2020 թվականի տեսակներն ու դրույքաչափերը սահմանելու մասին որոշման նախագծին և ներկայացնել ավագանու նիստին:

Կողմ- 3 Դեմ- 0

Օրակարգի երկրորդ հարցի շուրջ Լիդիա Պողոսյանը ներկայացրեց, որ «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 3-րդ հոդվածի՝ տեղական վճարը տեղական ինքնակառավարման մարմինների սեփական լիազորությունների շրջանակներում համայնքի կամ համայնքի պատվերով մատուցած ծառայությունների համար համայնքի բյուջե կամ բյուջեի բաղկացուցիչ մաս կազմող, օրենքի համաձայն բացված արտաբյուջետային միջոցների

հաշվին վճարվող, սույն օրենքի դրույթների հիման վրա ավագանու սահմանած պարտադիր գանձույթ է: «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ կետին և «Տեղական տուրքերի և վճարների մասին» օրենքի 8-րդ, 10-րդ, 13-րդ և 14-րդ հոդվածներին համապատասխան՝ տեղական տուրքերը համայնքի ղեկավարի ներկայացմամբ սահմանում է համայնքի ավագանին՝ համայնքի տարեկան բյուջեն հաստատելուց առաջ, ինչպես նաև օրենքի 16-րդ հոդվածով սահմանվում են տեղական վճարների արտոնություններ:

«Տեղական տուրքերի և վճարների մասին» օրենքի 10-րդ հոդվածով սահմանված են տեղական վճարների տեսակները, որի հիման վրա սույն որոշման նախագծով Լիդիա Պողոսյանը ներկայացրեց Բյուրեղավան համայնքում առաջարկվող տեղական վճարների տեսակները և դրույքաչափերը:

Որոշվեց՝

հավանություն տալ Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքում տեղական վճարների 2020 թվականի տեսակները, դրույքաչափերը և արտոնությունները սահմանելու մասին և ներկայացնել ավագանու նիստին:

Կողմ- 3 Դեմ- 0

Համաձայն «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 88-րդ հոդվածի՝ համայնքի բնակչության կենսաապահովման խնդիրները լուծելու նպատակով մատուցվող ծառայությունների իրականացման համար համայնքի ավագանին կարող է սահմանել համայնքի բյուջե մուտքագրվող վճարներ: «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 19-րդ կետին համապատասխան՝ համայնքի կողմից մատուցվող ծառայությունների դիմաց գանձվող վճարները համայնքի ղեկավարի ներկայացմամբ սահմանում է համայնքի ավագանին՝ համայնքի տարեկան բյուջեն հաստատելուց առաջ:

Սույն որոշման նախագծով առաջարկվում է Բյուրեղավան համայնքում սահմանել Բյուրեղավան համայնքի կողմից մատուցվող ծառայությունների դիմաց գանձվող վճարների 2020 թվականի դրույքաչափերը՝

1) հասցեների տրամադրման համար՝ 5000 (հինգ հազար) դրամ.

2) համայնքային սեփականություն հանդիսացող անշարժ գույքի օտարման փաստաթղթերի կազմման համար՝ 26 000 (քսանվեց հազար) դրամ.

3) համայնքի վարչական տարածքում փողոցային լուսավորության հենասյուների օգտագործման համար՝ ամսական 500 (հինգ հարյուր) դրամ՝ յուրաքանչյուր հենասյան համար.

4) ընտանեկան գերեզմանի կազմակերպման համար տրամադրվող վճարովի հողատարածքի յուրաքանչյուր քառակուսի մետրի համար՝ 10000 (տասը հազար) դրամ.

5) համայնքի գերեզմանատան պահպանման և սպասարկման ծառայության համար՝ 10000 (տասը հազար) դրամ:

Որոշվեց՝

հավանություն տալ Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի կողմից մատուցվող ծառայությունների դիմաց գանձվող վճարների 2020 թվականի դրույքաչափերը սահմանելու մասին և ներկայացնել ավագանու նիստին:

Կողմ- 3 Դեմ- 0

Օրակարգի 4-րդ հարցի՝ «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի վարչական տարածքում աղբահանության վճարի 2020 թվականի դրույքաչափերը և արտոնությունները սահմանելու մասին» նախագծի վերաբերյալ Վ. Հայրապետյանը ներկայացրեց, որ համաձայն «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» օրենքի 5-րդ հոդվածի՝ աղբահանության վճարը սույն օրենքով նախատեսված վճարողների կողմից աղբահանության դիմաց սույն օրենքով սահմանված կարգով և սույն օրենքով սահմանված դրույքաչափերի սահմաններում համայնքի ավագանու կողմից սահմանված չափով համայնքի բյուջե կամ արտաբյուջե գանձվող պարտադիր գանձույթ է: «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ և 20-րդ կետին, «Տեղական տուրքերի և վճարների մասին» օրենքի 8-րդ, 10-րդ, 13-րդ, 14-րդ և 16-րդ հոդվածներին և «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ և 8-րդ հոդվածի 7-րդ մասերին ու 14-րդ հոդվածին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում աղբահանության վճարը համայնքի ղեկավարի ներկայացմամբ սահմանում է համայնքի ավագանին՝ համայնքի տարեկան բյուջեն հաստատելուց առաջ, ինչպես նաև կարող են սահմանվել վճարի արտոնություններ:

Վ. Հայրապետյանը ներկայացրեց Բյուրեղավան համայնքում սահմանվող աղբահանության վճարի դրույքաչափերը՝ «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» օրենքի 14-րդ հոդվածի հիման վրա:

2020 թվականին նախատեսվում է աղբի հավաքման և փոխադրման թույլտվությունները տրամադրել կոնկրետ աղբահանության վճար վճարողների քանակի համար՝ վճարովի հիմունքներով: Թույլտվությունների համար վճարների դրույքաչափերը նախատեսվում է սահմանել համապատասխան աղբահանության վճար վճարողի կողմից սույն որոշման նախագծի 1-ին կետով սահմանված դրույքաչափերի 20 տոկոսի չափով:

«Տեղական տուրքերի և վճարների մասին» օրենքի 16-րդ հոդվածի և «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ համայնքի վարչական տարածքում աղբահանության վճարից 2020 թվականին նախատեսվում է արտոնություններ սահմանել հետևյալ սոցիալական խմբերի համար՝ սահմանված դրույքաչափերի 50%-ի չափով՝

1) Հայաստանի Հանրապետության պաշտպանության ժամանակ, ինչպես նաև ծառայողական պարտականությունները կատարելիս զոհված (մահացած) զինծառայողների ընտանիքների անդամներին.

2) բազմազավակ (մինչև 18 տարեկան 4 և ավելի անչափահաս երեխաներ ունեցող) ընտանիքներին:

Որոշվեց՝

հավանություն տալ Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի վարչական տարածքում աղբահանության վճարի 2020 թվականի դրույքաչափերը և արտոնությունները սահմանելու մասին և ներկայացնել ավագանու նիստին:

Կողմ- 3 Դեմ- 0

Լիդիա Պողոսյանը օրակարգի վերջին՝ «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի ավագանու 2018 թվականի դեկտեմբերի 27–Ի N 71-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու և պահուստային ֆոնդից գումար հատկացնելու մասին» նախագծի շուրջ ներկայացրեց, որ Բյուրեղավան համայնքի ավագանու քննարկմանը ներկայացվող նախագիծը մշակվել է Բյուրեղավան համայնքում կապիտալ ծրագրերի առաջնահերթ լուծում պահանջող հիմնախնդիրների լուծման ուղղությամբ իրականացվելիք աշխատանքների համար: Բյուրեղավան համայնքում կապիտալ ծրագրերի առաջնահերթ լուծում պահանջող հիմնախնդիրների լուծման ուղղությամբ իրականացվելիք աշխատանքների համար Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից 2019 թվականի հոկտեմբերի 17-ի N 1453-Ն որոշմամբ պետական բյուջեից համայնքին հատկացվել է 1454,2 հազար դրամ և հոկտեմբերի 24-ի N 1484-Ն որոշմամբ՝ 31320,0 հազար դրամ, որի արդյունքում անհրաժեշտություն է առաջացել բյուջեի ֆոնդային մասի մուտքերը ավելացնել 32774,2 հազար դրամով:

Հաշվի առնելով համայնքի բյուջեի տասը ամսվա կատարողականը և կանխատեսումները՝ առաջարկվում է ավելացնել համայնքի վարչական բյուջեի 2019 թվականի եկամուտները 2550,0 հազար դրամով, որից 2000,0 հազար դրամը՝ գույքահարկ փոխադրամիջոցների համար և 550,0 հազար դրամը՝ օրենքով և իրավական այլ ակտերով սահմանված՝ համայնքի բյուջեի մուտքագրման ենթակա այլ եկամուտներ:

Առաջարկվում է համայնքի բյուջեով նախատեսված «Անդրանիկ Պետրոսյանի անվան Բյուրեղավանի քաղաքային պոլիկլինիկա» ՓԲԸ-ի հիմնանորոգման աշխատանքների կատարման համար ծախսը՝ «5113» հոդվածով ավելացնել 1454,2 հազար դրամով և համայնքում իրականացվող ասֆալտապատման աշխատանքներն ավելացնել 31320,0 հազար դրամով:

Անհրաժեշտություն է առաջացել Բյուրեղավան համայնքի 2019 թվականի բյուջեով նախատեսված վարչական մասի պահուստային ֆոնդից 5124,7 հազար դրամը և նախատեսված ծախսերը վերաբաշխել համայնքի բյուջեով նախատեսվող լրացուցիչ ծախսերի ֆինանսավորման նպատակով՝ 650,0 հազար դրամը հատկացնել «Օրենսդիր և գործադիր մարմիններ, պետական կառավարում» (բաժին 01, խումբ 1, դաս 1) ծախսերին , որից 350,0 հազար դրամը՝ «4212» հոդվածին և 300,0 հազար դրամը՝ «4214» հոդվածին:

Ելնելով այն հանգամանքից, որ, համաձայն Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության (ԳՄՀԸ) և Բյուրեղավանի համայնքապետարանի միջև 25.10.2019 թվականին կնքված պայմանագրի, համայնքապետարանում ներդրվելու է մեկ պատուհանի գրասենյակ, որը վերակառուցվելու ու վերանորոգվելու է, և անհրաժեշտությունից ելնելով՝ 3300,0 հազար դրամ «5113» և «5134» հոդվածներից վերաբաշխել՝ ավելացնելով «5122» հոդվածին՝ գրասենյակային գույքի ձեռք բերման նպատակով:

Համայնքի բյուջեի «Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ» (բաժին 01, խումբ 3, դաս 3) «4823» հոդվածն ավելացնել 170,0 հազար դրամով:

Համայնքի բյուջեի «Աղբահանում» (բաժին 05, խումբ 1, դաս 1), «Նախադպրոցական կրթություն» (բաժին 09, խումբ 1, դաս 1) և «Արտադպրոցական դաստիարակություն» (բաժին 09, խումբ 5, դաս 1) ծրագրերով նախատեսված համայնքային ենթակայության ոչ առևտրային կազմակերպությունների լրացուցիչ ծախսերի ֆինանսավորման համար սուբսիդիաներ ոչ ֆինանսական պետական (համայնքային) կազմակերպություններին «4511» հոդվածն ավելացնել 2200,0 հազար դրամով և ոչ նյութական հիմնական միջոցներ «5132» հոդվածով՝ 1000,0 հազար դրամ:

Համայնքի Ջրաբեր բնակավայրում խմելու ջրի գծով առաջացած խնդիրների լուծման համար առաջարկվում է բնակչության ջրի վարձի գծով կուտակված պարտքը և ընթացիկ ծախսը «Ջրամատակարարում» (բաժին 06, խումբ 3, դաս 1) «4213» հոդվածով ավելացնել 2000,0 հազար դրամով, «4251» հոդվածով՝ 1000,0 հազար դրամով և «5134» հոդվածով՝ 2554,2 հազար դրամով:

Համայնքի բյուջեի «Մշակույթի տներ, կենտրոններ» (բաժին 08, խումբ 2, դաս 3) ծրագրով նախատեսված ծախսերն ավելացնել 1554,7 հազար դրամով:

Որոշվեց՝

հավանություն տալ Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի ավագանու 2018 թվականի դեկտեմբերի 27-Ի N 71-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու և պահուստային ֆոնդից գումար հատկացնելու մասին որոշման նախագծին և ներկայացնել ավագանու նիստին:

Կողմ- 3 Դեմ- 0

Նիստն ավարտվեց:

Հանձնաժողովի նախագահ՝ _____ Արման Օհանյան

Հանձնաժողովի անդամներ՝ _____ Արման Խանզադյան

_____ Արտյոմ Ավագյան